
ՕՏՈՒՆԻ «ՀԱՅԵՐԵՆ-ԼԱՏԻՆԵՐԵՆ ԲԱՌԱՑԱՆԿԸ»

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Հայագիտության մեջ ընդունված է հայ-հռոմեական (լատինական) մշակութային առնչությունները բաժանել երկուսի՝ հայ-հռոմեական (մ. թ. ա. 66 – մ. թ. 423 թթ.) և հայ-լատինական (XIV–XVIII դդ.)¹: Նման բաժանումը ինչ-որ չափով պայմանական է, հիմնված է այն իրական հիմքի վրա, որ այդ ժամանակներում, իրոք, եղել են հայերի և հռոմեացիների (կամ հռոմեական-եկեղեցական քարոզչության) միջև անմիջական ռազմաքաղաքական, մշակութային (հիմնականում՝ եկեղեցական) առնչություններ: Դա չի բացառում այն հանգամանքը, որ այլ ժամանակներում ևս եղած լինեն առանձին, այլև մասնավոր շփումներ հայերի ու հռոմեացիների միջև (առևտուր, ուխտագնացություն և այլն): Այդպիսին, թերևս, մշտապես եղել է, սակայն պետք է շեշտել, որ դրանք չեն կրել այնքան սերտ և անմիջական (իրավապես ճանաչելի) բնույթ, որքան նշված երկու կարգի առնչությունները: Համեմատաբար վերջին տարիներին լույս են տեսել այնպիսի աշխատանքներ, որոնցում այդ առնչությունները նշվում են ավելի վաղ ժամանակների համար (XI, նույնիսկ՝ X դ.)²:

Ըստ այսմ՝ ուշագրավ է Օտունի «Հայերեն-լատիններեն բառացանկը» (IX դ. վերջ – X դ. սկիզբ), որին նվիրվել են տարբեր բնույթի, հատկապես բնագրագիտական (տեքստաբանական) և լեզվաբանական մի շարք աշխատանքներ, և դրանք, անշուշտ, այդ բառացանկի կարևորության վկայություն են: Սակայն կան դեռևս սպառիչ լուծում չստացած հարցեր, մանավանդ հայերենի ընդհանուր պատմության, մասնավորապես հնչյունաբանության առումով:

Բառացանկի «լեզուն», որքան կարելի է դատել հայերեն բառերի տառադարձությունից, մի կողմից՝ արտացոլում է ժամանակի արտասանությունը (անկախ տառադարձողի՝ հայերենի իմացության մակարդակից), մյուս կողմից՝ տառադարձական տարբերությունները հնչյունական «շեղումներ» են, թեկուզ ժամանա-

¹ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան. Հայերը և հռոմեացիներ. լեզվական շփումներ.– «Երկիր» (Երևան), 13. XI. 1991, և ուրիշ՝ Լատինարան հայերենի պատմություն (14–18-րդ դդ.), Երևան, 2010:

² Հմմտ. Ժ. Դեդեյան. Հայ վանականները և ուխտավորները Արևմտյան Եվրոպայում X դարի վերջում և XI դարի սկզբում.– ՊԲՀ, 1984, - 3, էջ 21–36:

կի գրական լեզվից (գրաբարից), մի տեսակ ներկայացնում են բանավոր խոսքի (եթե ոչ՝ որևէ բարբառի) լեզվական վիճակը:

Նման տարբերությունների (շեղումների) հարցը գրեթե միշտ եղել է հայերենագիտության ուշադրության սահմաններում:

Այսպես, Ա. Մեյեն, այցելելով Էջմիածին, տեղում ուսումնասիրում է Աստվածաշնչի (հատկապես՝ Ավետարանների) և ուրիշ հին ձեռագրերի (Ագաթանգեղոս, Եզնիկ, Եղիշե և այլն) գրչագրերը և հանգում ուշագրավ մտքի՝ կապված հայերենի հնչույթային, մասամբ նաև քերականական տարբերությունների հետ, որոնք, ինչ խոսք, ժամանակին նորություն են եղել հայոց լեզվի պատմության և համեմատական ուսումնասիրության տեսանկյունից: Օրինակ՝ Աստվածաշնչի մի գրչագիր-ձեռագրում (- 102) Մեյեն, ի թիվս այլ երկակի տարբերության քննարկման, *h > խ* շփոթի մասին գրում է հետևյալը. «Ճիշտ է, որ սիրեցես կանոնավոր տիպն անգամ որոշ ձեռագրերում փոխարինվել է սիրեցես-ով. և հատկապես Էջմիածնի 102 ձեռագիրը, որը 971–981 թթ. միևնույն գրչի կողմից արտագրված գանազան բնագրերի ժողովածու է, այդ մասին բազմաթիվ օրինակներ է տալիս, ինչպես կարելի է տեսնել ձեռագրի հատվածների հիանալի հրատարակությունից, որ լույս է ընծայել պր. Գալուստ Տեր-Մկրտչյանը (Արարատ, 1902, էջ 368 և հջ., 1903, էջ 937 և հջ.): Բայց այս ձեռագրի գրիչն ուժեղ կերպով կրել է բարբառի ազդեցությունը. այսպես, օրինակ՝ նա անկարող է տարբերակել *h*-ով և *խ*-ով ներկայացված հնչույթները և շարունակ միմյանց հետ շփոթում է այդ տառանշանները»³: Նկատենք, որ մեզ հետաքրքրող նյութի ժամանակի համար նման դիտարկումը միակը չէ, ոչ էլ հետազայում է պակասում դրանց վերաբերյալ եղած քննարկումը: Ուստի գրչագրական կամ ուղղակիորեն տեղ գտած ոչ կանոնական ձևերի օրինակները կողմնակիորեն օգնում են հիշյալ բառացանկին ավելի մանրամասն անդրադառնալու գործին: Մենք ունենք այս դեպքում որոշ կողմնակի տվյալներ, որոնց կանդրադառնանք մեր հետագա աշխատանքներում:

Օտունի երկլեզվյան բառացանկը միայն XIX դ. վերջերին է եղել բնագրագիտական-բանասիրական քննության առարկա⁴: Փաստորեն, չհաշված Օտունի գրադարանի քարտարանը հեղինակողի և Փարիզի ձեռագրատան ընդհանուր քարտարանը կազմողի ձեռնարկումները՝ այս բառացանկի բուն նյութով առաջին հետաքրքրվողը Օմոնն է, որը ցանկի սկզբում գրում է հետևյալը. «Տեղեկությունը, որը զետեղված է Օտունի մեծ հավաքածուի 17A ձեռագրում՝ Ընդհանուր ցանկ տարածքին վերաբերող ձեռագրերի առաջին հատորում, որքան էլ որ համառոտ

³ Ա. Մեյե. Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 462:

⁴ Sté u H. O m o n t. Manuel de conversation arménien-latin du Xe siècle.- «Bibliothèque de l'école des Chartes, Revue d'rudition, consacrée spécialement à l'étude du Moyen Age, XLIII, année 1882, Paris, Librairie d'Alphonse Picard, էջ 563–564:

է, ճշգրիտ չէ: Ցանկի հեղինակը պարզապես փոխառել է 17-րդ դարի մի էտիկետ, որը ներկայացված է հատորի վերջում, ուր կարելի է կարդալ. «Վալտերիուսի նվիրածից Բ. Հիերոնիմի ոչ ծավալուն մի գործ և Նամակներ, X դ.է: Այս ձեռագիրը, պատճենված 9-րդ դարի ավարտին կամ 10-րդ դարի սկզբին, իրականում Ս. Ժերոմի Նամակների մի շարք է, իսկ վերջում (էջ 156) ավելացված է նույն ժամանակաշրջանի հայ-լատինական գրուցարան, որը հետաքրքիր կլինի բազմացնել»⁵:

Այնուհետև, 90-բառանոց ցանկը բաժանում է չորս մասի՝ *Verba seu dictiones armeniorum* (= Բառեր կամ թե հայերեն արտասանություններ) խորագրի տակ, 1) *Nomina dierum* (= օրվա անուններ, 7 բառ), 2) *Nomina numeri* (= թվերի անուններ, 20 բառ), 3) *Nomina ceterarum rerum* (= այլնայլ իրերի անուններ, 51 բառ), 4) *Nomina sanctorum rerum* (= սրբազան իրերի անուններ, 12 բառ):

Օ. Կարիերը երկրորդն է, որ անդրադարձել է այս բառացանկին՝ գրելով առանձին աշխատանք, որն ավելի ծավալուն է, քան մյուսներինը, և որը բառի բուն իմաստով լեզվաբանական աշխատանք է⁶: Այն բաժանված է երեք մասի՝ ա) ներածություն, որն ընդհանուր վերնագիրն է (*Un ancien Glossaire Latin-Armenien*, էջ 7–10), բ) բառեր՝ իրենց հայերեն հնչումով (*Verba seu dictiones armeniorum*, էջ 11–17), գ) անվերնագիր (հնչման որոշ տարբերությունների վերաբերյալ, էջ 17–19)⁷:

Բառացանկի որոշ բառերի ձայնավորների գրության մասին խոսում է նաև Ս. Մեյեն իր մի գրախոսականում՝ գրված Յ. Կարստի կիլիկյան հայերենի քերականության վերաբերյալ⁸:

Բառացանկը Կարիերը բերում է նշված երեք մասերից երկրորդում, ընդ որում չորս խմբով՝ նույնպես «*Verba seu dictiones armeniorum*» խորագրով, և, ի տարբերություն Օտունի ցանկի, ավելացվում է լատինատառ թարգմանության հայերեն տառադարձվածը (բերում ենք նույնությամբ):

⁵ H. O m o n t. Նշվ. աշխ., էջ 563:

⁶ *Un ancien Glossaire Latin-Armenien, publin et annotn par A. Carrinre, Paris, MDCCCLXXXVI (=1886), 19 p.*: Ի դեպ՝ Է. Աղայանը գրում է, որ Պ. դը Լագարդն է փորձել անդրադառնալ բառացանկում տեղ գտած հայերեն բառերի արտասանությանը (տե՛ս Է. Աղայան. Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958):

⁷ Կարիերի աշխատանքի մասին ժամանակին գրախոսականով և առհասարակ արտահայտվել են Պ. դը Լագարդը և Ս. Մեյեն (տե՛ս P. de Lagarde (գրախոս.). *Göttingische gelehrte Anzeigen*, 8, 1887, p. 292–294):

⁸ A. Meillet. Remarques sur la grammaire historique de l'arménien de Cilicie de M. J. Karst.– “Zeitschrift für armenische Philologie”, B. 2, Heft 1, 1903, p. 18–28 (*հայերեն թարգմ.*՝ Ս. Մեյեն. Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 441–451):

Nomina dierum (= օրվա անուններ).

1. *Dies dominicum* – *Kyrache* – կիրակե, կիրակե
2. *Feria II* – *Ergout xapte* – երկու(ք՛շարթի)
3. *Feria III* – *Eric xapte* – երեքշարթի
4. *Feria IIII* – *Khurec xapte* – չորքշարթի
5. *Feria V* – *Hync xapte* – հինգշարթի
6. *Feria VI* *Urpap* – ուրբաթ
7. *Feria VII* – *Sabpat* – շաբաթ (նույն տեղում, էջ 11–12)⁹:

Nomina numeri (= թվերի անուններ).

8. *I* – *Meche* – մեկ (մէկը?)
9. *II* – *Ergout* – երկուք
10. *III* – *Eriec* – երեք
11. *IIII* – *Khuert* – չորք
12. *V* – *Hinc* – հինգ
13. *VI* – *Viit* – վեց
14. *VII* – *Hioct* – եօթ, եօթը
15. *VIII* *Ut* – ութ
16. *VIII* – *In* – ինը
17. *X* – *Taz* – տասը
18. *XX* – *Xan* – քսան
19. *XXX* – *Erchun* – երեսուն
20. *XXXX* – *Karraschun* – քառասուն
21. *L* – *Ischun* – յիսուն
22. *LX* – *Vatschun* – վաթսուն
23. *LXX* – *Hioctanatschun* – եօթանասուն
24. *LXXX* – *Utanatschun* – ութանասուն
25. *LXXXX* – *Ininta*¹⁰
26. *C* – *Haruir* – հարուր
27. *M* – *Hazar* – հազար (նույն տեղում, էջ 12–13):

Nomina ceterarum rerum (= այլնայլ իրերի անուններ).

⁹ Բառամիջյան գծիկների և արաբական թվերին հաջորդող կետերի նշումը մերն է:

¹⁰ Բավական ուշագրավ է, բայց ոչ վերջնական Կարիերի տված բացատրությունն այս իննսուն-ի (*Ininta*) վերաբերյալ. ըստ իս` իննիստ, պետք է վերականգնել ինին տասն (?):

28. *Panis* – *Haz* – հաց
29. *Caro* – *Misc* – միսք, *pl. de միս*
30. *Vinum* – *Chini* – գինի
31. *Caseus* – *Paner* – պանիր
32. *Ovum* – *Chu* – ձու
33. *Piscis* – *Chugn* – ձուկն
34. *Sal* – *Ahl* – աղ
35. *Aqua* – *Churc* – ջուր (*ջուրը ?*)
36. *Celum* – *Erginc* – երկինք
37. *Sol* – *Arechac* – արեգակ
38. *Luna* – *Lucenga* – լուսնկայ, լուսինկայ
39. *Stellae* – *Astil* – աստղ
40. *Terra* – *Kcedinc* – գետինք
41. *Homo* – *Anzen* – անձն
42. *Capillus* – *Mazen* – մազն (*ն՝ dnterm.*)
43. *Oculus* – *Hahc* – աչք
44. *Supercilium* – *Hunc* – յունք, յոնք
45. *Cilium* – *Ardevanunc* – արտնանունք
46. *Nasus* – *Chit* – քիթ
47. *Os* – *Peran* – բերան
48. *Labra* – *Scirtun* – շրթունք
49. *Dens* – *Atmunc* – ատամունք
50. *Gengiva* – *Lind* – լինդ
51. *Lingua* – *Lizu* – լիզու
52. *Barba* – *Muruc* – մուրուք
53. *Facies* – *Eriesc* – երեսք
54. *Auris* – *Aganch* – ականջ
55. *Collum* – *Vise* – վիզ (*վիզը ?*)
56. *Gula* – *Puele* – փողք
57. *Guttur* – *Kcerchac* – խոչակ
58. *Pectus* – *Scirt* – սիրտ
59. *Mamilla* – *Cize* – ծիծ (*ծիծը ?*)
60. *Venter* – *Puerhe* – փոր (*փորը ?*)
61. *Humerus* – *Tigunc* – թիկունք
62. *Brachium* – *Striuch* – ձեռք
63. *Manus* – *Hab* – ափ
64. *Digtus* – *Matun* – մատունք

65. *Pugnus* – *Prunhc* – բռուկ
 66. *Spina* – *Hualn* – նիւ
 67. *Dorsum* – *Cuelc* – կողք
 68. *Latus* – *Scirt* – սիրտ
 69. *Renes* – *Handam* – անդամ
 70. *Renes* – *Gernac* – կոնակ
 71. *Coxa* – *Andam* – անդամ
 72. *Genu* – *Scunch* – ծունկ
 73. *Crus* – *Ulucc* – ուղք, ուղկ
 74. *Pes* – *Uaden* – ոտն
 75. *Cabilia* – *Cuech* – կոճ
 76. *Venetrum* – *Cliu* – կ(....)
 77. *Testiculi* – *Scuc* – ձուկ
 78. *Mulier* – *Kenik* – կնիկ (նույն տեղում, էջ 13–16):

Nomina sanctarum rerum (= սրբազան իրերի անուններ).

79. *Ecclesia* – *vanc* – վանք
 80. *Deus* – *Ter* – Տէր
 81. *Altare* – *Patarag* – պատարագ
 82. *Crux* – *Chahc* – խաչ
 83. *Angelus* – *Arrachil tevavoet* – անաբեալ թնաւորք
 84. *Sanctus* – *Supr* – սուրբ
 85. *Bonus* – *Aihich* – աղէկ
 86. *Episcopus* – *Episcopus* – եպիսկոպոս
 87. *Monachus* – *Apiigulalts* – արեղայացու
 88. *Presbiter* – *Eresc* – երէց
 89. *Levita* – *Aottrocts* –,
 90. *Xpianus* – *Xrucner* – Քրիստոնէ (նույն տեղում, էջ 16–17):

Կարիերն այս ցանկի տեղադրումից, որոշ տեղերի վերծանությունից, այնուհետև վերլուծությունից առաջ անդրադառնում է բառացանկի (ձեռագրի) բանասիրական և բնագրագիտական քննարկմանը՝ հայտնելով կարծիք գրության ժամանակի, լատիներեն ձևերի թարգմանության երկակիության, գործածության նպատակադրման մասին և այլն: Այս հարցերին հետագա ուսումնասիրողները

ևս այս կամ այն չափով անդրադարձել են՝ ամենից առաջ շեշտելով երևույթի մշակութային կողմը¹¹:

Տվյալ դեպքում բավական ուշագրավ են Կարիերի դիտարկումները, որոնք բերվում են ցանկին կից՝ տողատակի ծանոթագրությունների ձևով: Անվանի հայագետն անում է բանասիրական լուրջ աշխատանք գրանցված ձևերի՝ հին գրական հայերենի համեմատությամբ նկատվող արտասանական և բառային շեղումների վերաբերյալ. օրինակ՝ լատ. bonus «լավ» բառը ցանկում թարգմանված է աղէկ, որի համար տողատակում ծանուցվում է՝ Vulg. pour բարի (= խսկց. բարի-ի փոխարեն):

Ըստ այսմ՝ 90-բառանոց ցանկի բնագրային-բանասիրական քննարկման համար Կարիերն ունի 42 ծանոթագրություն, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ:

ա) Աղէկ (փխ. բարի) ծանոթագրման նման են՝ եօթ, եօթը (փխ. եօթն), ինը (փխ. ինն), տասը (տասն), ութանասուն (փխ. ութսուն), հարուր (փխ. հարիւր), արեգակ (փխ. արեգակն), լուսնկայ, լուսինկայ (փխ. լուսին), լինտ (փխ. լինտը/լինդը), լիզու (փխ. լեզու), խոչակ (փխ. խոչափող), ծիծ, ծիծը (փխ. ստին, ստինք), կոնակ (փխ. կունն), ծունկ (փխ. ծունգք, ծունկք): Այստեղ կարող է լինել առարկություն. օրինակ՝ լատինագիր հայերեն ձևի տառադարձումը հաճախ տարբերվում է բնագրից (օրիգինալից), և ըստ այդմ էլ այն համեմատվում է գրաբարի հետ (Hiocht – եօթ, եօթը, Ut – ութ, In – ինը, Taz – տասը և այլն):

բ) Եղած այս կամ այն բառի նման գրանցումը ոչ թե քննվում է ինքնին, այլ գրական այլ աղբյուրների օգտագործմամբ. համեմատության եզր է ընտրված հիմնականում Մխիթար աբբա Սեբաստացու բառարանը, մասամբ՝ Յ. Շրյոդերի քերականությունը, այլն Ս. Դյուլորիեի ու Պ. դը Լագարդի աշխատությունները:

գ) Որոշ դեպքերում չի նշվում բառի հայերեն համարժեքը (հմմտ. 25. LXXXX – Ininta –, 89 Levita – Aottoets –,), երբեմն էլ հայերենի դեպքում տրվում է ոչ թե եղած, այլ գրաբարյան ձևը (հմմտ. 16. XIII In – ինը, 17. X Taz – տասը, 19. XXX Erchun – երեսուն և այլն):

դ) Կան բառի հայերեն գրության անհարկի միջամտություններ, երբեմն բառը բերվում է հարցականով և այլն. հմմտ. 2. Feria II Ergout xapte երկու(ք)շաբթի, 35. Aqua Chure ջուր (ջուրը (?)), 55. Collum Vise վիզ / (վիզը (?)), 59. Mamilla Cize ծիծ / (ծիծը (?)), 60. Venter Puerhe փոքր / փոքրը և այլն, որն ոչ այլ ինչ է, եթե ոչ բնագրում առկա ժամանակի խոսակցական ձևերի հնարավոր հաշվառման արդյունք:

ե) Տեղ է տրվում հայերեն նշանակման կրկնակ ձևերի (տարբերակների). հմմտ. կիրակէ / կիրակէ, եօթ / եօթը, լուսնկայ / լուսինկայ, յունք / յոնք, ոլոք / ո-

¹¹ Հմմտ. Ա. Գ. Դոլոխանյան. Լատիներեն-հայերեն հնագոյն բառարանը. – «Շիրակ» (Բեյրութ), 2006, ապրիլ-յունիս, էջ 44-47:

լոգ և այլն, որն այլ բան չէ, քան լատինագիր հայերեն բառի ոչ լիարժեք արտացոլման հետևանք. քննարկումը մնում է առկախ և այլն:

զ) Նկատելի է Օմոնի ցանկից (1) տարբերվող վերականգնում (2): Հմմտ.

- | | |
|--------------------|------------------------------|
| (1) C. Hariur – | (2) C. Haruir հարուր, |
| (1) Crus – Vluec – | (2) Crus – Uluec ոլոք, ոլոգ, |
| (1) Pes – Vaden – | (2) Pes – Uaden ոսն: |

է) Մահմանվում են հնչունական որոշակի զուգադիպումներ՝ ըստ բառի կազմում դրանց գործածության դիրքային առանձնահատկությունների: Հմմտ.

1) պայթական բաղաձայնների դեպքում՝ $f > p$, $q > ch$, kc , $\eta > d$, $u > p$, $l > g$, k , c , ch , $u > t$, d :

2) ձայնավորների դեպքում՝ $e >$ (բառասկզբում) e , (մեկ այլ ձայնավորից առաջ) hi , n (բառասկզբում) $> u$, ua , hua (բառամիջում), ue , ua և այլն¹²:

Հետագայում նույնպես այս կամ այն չափով խոսվում է այդ բառացանկի մասին: Դրանք, ի տարբերություն վերը քննարկված երկուսի, բավական ակնարկային են, այլև թողնում են կողմնակի անդրադարձի տպավորություն՝ հարակից ուսումնասիրողների հետապնդած բուն նպատակին:

Այդ աշխատանքները մի քանի խումբ են՝

ա) ընդհանուր բանասիրական¹³,

բ) հայ մատենագիտության և գրականության պատմությանը վերաբերող¹⁴,

գ) հայ լեզվաբանական մտքի, նաև բառարանագրության պատմությանն առնչվող¹⁵:

Հիշյալ, այլև ավելի ուշ երևան եկած գրեթե բոլոր աշխատանքներում, անկախ քննարկման կամ ակնարկման տարբեր չափերից, բառացանկն արժանանում է դրվատանքի՝ ամենից առաջ իր հնության նկատառումով:

Բառացանկին անդրադարձել է նաև Ա. Մեյեն՝ Լատերի հայտնի քերականության թարգմանության առիթով, որ արած է եղել Կարիերը. «Ի պատիվ հայ բանա-

¹² Un ancien glossaire latin-arménien, p. 18.

¹³ Հմմտ. Կ. Կոստանեան. Հայագիտությունն Արևմտեան Եւրոպայում (համառոտ տեսություն եւ գրացուցակ), Թիֆլիս, 1910, էջ ԽԶ, Գ. Ա. Շրոմպֆ. Ուսումնասիրությունք հայ լեզուի և մատենագրութեան յԱրեւմուտս (ՄԴ-ՄԹ դար), Վենետիկ, 1895, էջ 7-9, Հ. Աճառյան. Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 571:

¹⁴ Հ. Անասյան. Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 1211-1212, Ա. Տեր-Ղևնդյան. (գրախոս.), «La livre Arménien à travers les ages» (Marseille, 1985).- ՊԲՀ, 1987, - 1, էջ 219-221: Ա. Դոլուխանյան. նշվ. աշխ.:

¹⁵ Գ. Բ. Ջահուկյան. Լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1960, էջ 116-117, Բ. Աղայան. նշվ. աշխ., էջ 106, Գ. Կ. Գասպարյան. Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1967, էջ 46-47, Հ. Մ. Ամալյան. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XV դդ.), Երևան, 1966, էջ 37-40:

սեր Մ. Էմինի և հանուն Արևելյան լեզուների դպրոցի, նա (Կարիերը – Վ. Հ.) հրատարակում է մի հին լատին-հայ բառարան»¹⁶: Այնուհետև, Մեյեն գրում է, այն տեղեկությունները, որ պր. Կարստը տալիս է է-ի և է-ի արտասանության մասին, ուշագրավ են: Հետաքրքրական կլիներ դրանք համեմատել այն եզրակացությունների հետ, որ կարելի է հանել 9-րդ դարի վերջի կամ 10-րդ դարի սկզբի լատիներեն մի ձեռագրի լատիներեն-հայերեն բառացանկի (*glossaire*) գրության ձևերից (*Carrinre, Un ancien glossaire latin-arménien, Փարիզ, 1886*): Արդարև, այստեղ է-ն նշված է e-ով թեկուզ այն շեշտված լինի, - 80, 88: Ընդհակառակը, անշեշտ է-ն նշված է e-ով թե՛ բառամիջում, ինչպես *arechac* արեզակ բառում (-37), թե՛ բառասկզբում, ինչպես *erginc* երկինք բառում. սակայն, երբ է-ն շեշտված է, այն նշված է ie -ով՝ *eriec* երեք (- 3 և 10), *eriesc* երեսք (- 53). *lizu*-ն, *lingua*, լեզու (- 51) ներկայացնում է ոչ թե հայ է-ի փոփոխությունը i-ի, այլ լիզու հայտնի բարբառային ձևը: Նույն բառացանկում անշեշտ n-ն ներկայացված է u-ով, մի բան, որ ճշտիվ համապատասխանում է պր. Կարստի ուսուցած կիլիկյան արտասանությանը, էջ 21, այսպես՝ *khurec xapte* չորեքշաբթի (- 4). ոչ բառասկզբնային շեշտված n-ն արտահայտված է ue-ով՝ *uluec* ոլոք (- 73, որտեղ բառասկզբի անշեշտ n-ն ներկայացված է նաև u -ով), *khuert* (կարդալ՝ *khuerc*) չորք (- 11), *puelc* փողք (- 56), *cuelc* կողք (- 67), *cuech* կոճ (- 75) և այլն: Եվ բառասկզբնային շեշտված n-ն ներկայացված է ua-ով՝ *hualn* ողն (-66), *uaden* ոտն (- 74). հմմտ. Լեհաստանի հայերենում բառասկզբնային շեշտված n-ի յուրահատուկ արտասանությունը, որ հիշատակվում է պր. Կարստի կողմից, էջ 20, - 5,¹⁷:

Մեյեն անդրադառնում է նաև հայ. լ / ղ լծորդությանը, որ քննարկվում է Կարստի գրքում, և դարձյալ օգտագործվում են բառացանկի համապատասխան տվյալները՝ նույն երևույթի պատմական տեղաշարժը ճիշտ ներկայացնելու համար. Ֆրանսերենի *ld*-ի դո տառադարձումը շատ խորհրդավոր է թվում, երբ կարդում ենք պր. Կարստի ուսումնասիրությունը. այն շատ հստակ է դառնում, երբ մտաբերում ենք, որ այն ժամանակ, երբ Կիլիկիայում սկիզբ առան ֆրանսիացիների և հայերի հարաբերությունները, այսինքն՝ 11-րդ դարում, ֆրանսերեն *l*-ն բաղաձայնից առաջ քմային *l* էր և չէր հանգել *u*-ին, որ այն պետք է դառնար: Այս տառադարձությունից հետևում է, թե հայերենի *ղ*-ն դեռևս այն կոկորդային ձայնեղ շփականը չէր, որ նա դարձավ հետագայում, և այն դեռևս *l*-ի բնույթ ուներ: Եվ իրոք, վերոհիշյալ լատիներեն-հայերեն բառացանկում *ղ*-ն նշվում է *hl*-ով՝ *ahl* աղ (- 34), *hul* *astil* աստղ (- 39), *puelc* փողք (- 56), *hualn* ողն (- 66), *cuelc* կողք (- 67) բառերում՝ պարզապես *l*-ով: Տարբերվող միակ օրինակը՝ *aichich*, *bonusc* (- 85) աղէկ, ակնհայտորեն խեղաթյուրված է ամեն տեսակետից: Այս առթիվ նշենք,

¹⁶ Տե՛ս «Արարատ» (ամսագիր), 1902, էջ 911:

¹⁷ Ա. Մեյե. նշվ. աշխ., էջ 448:

Ֆրանսերենի հայերեն տառադարձության եղանակները, որոնք հաստատվել են 11-րդ դարում, շարունակվել են մինչև իսկ այն ժամանակ, երբ դրանք ո՛չ ֆրանսերենի արտասանությանն էին համապատասխանում, ո՛չ էլ հայերենի: Դրանք հանդիպում են 16-րդ դարի և նույնիսկ հետագա բնագրերում, սակայն դրանցից ոչ մի հետևություն չի կարելի անել¹⁸:

Գ. Գասպարյանը, օրինակ, իրավացիորեն գրում է. «Սակայն ինչպիսին էլ լինի այդ բառացանկը, յուր անճշտություններով հանդերձ, մի թանկագին գանձ է՝ խոր հնությունից պահպանված և արժանի է լուրջ ուշադրության և ուսումնասիրության, մանավանդ արտասանական որոշ հարցերի տեսակետից¹⁹: Սա ճիշտ նկատում է, մանավանդ հետագա ուսումնասիրության պահանջ ներկայացնելու տեսանկյունից:

1980-ական թվականներին Օտունի բառացանկը քննության առարկա է դառնում հայ բարբառների տեսական հարցերի առնչությամբ²⁰: Այս դեպքում նկատում ենք, որ հնարավոր հարցադրումը, այն է՝ հին (X դ.) հնչյունական երևույթները համեմատել նոր բարբառների տվյալների հետ, որքան էլ ինքնօրինակ, կարող է մտնել փակուղի թեկուզ այն պատճառով, որ ըստ այդմ համեմատության եզրերի միջակա օղակները ոչ մի կերպ չեն բացահայտվում և սահմանվում:

Այսպես, Յ. Վայտենբերգը փորձում է «բառացանկի լեզուն կապել Հայաստանի որևէ բարբառային տարածքի հետ՝ հաշվի առնելով, անշուշտ, հազար տարվա բացը բառարանի և ժամանակակից հայ բարբառների վկայության փաստի միջև»²¹:

Սա տեսականորեն լավ նախադրյալ է, սակայն, արդյո՞ք հնարավոր է այն լիովին իրականացնել, այսինքն՝ ըստ այդմ քննարկել բառացանկի թե՛ հնչյութային և թե՛ բառային երևույթները: Ի դեպ՝ բառային քննություն չի կատարվում, մանավանդ ծագումնային և բառակազմական բաղադրիչների բնույթի տեսակետից. հմմտ. լինդ (փխ. լինդր / լինդր), ութանասուն (փխ. ութսուն), ինը (փխ. ինն) և այլն: Բառերին ուշադրություն է դարձվում ներլեզվական (գրական կամ խոսակ-

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Գ. Գ. Գասպարյան. նշվ. աշխ., էջ 46:

²⁰ J. J. S. Weitenberg. *Armenian Dialects and the Latin-Armenian Glossary of Autun.* – «*Medieval Armenian Culture (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6)*», Chico, CA: Scholars Press, 1983, pp. 13–28; Հ. Դ. Մուրադյան. (գրախոսություն), J. J. S. Weitenberg. *Armenian Dialects and the Latin-Armenian Glossary of Autun. Տպագրված Medieval Armenian Culture (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6)*, Chico, CA: Scholars Press, էջ 13–28. – ՊԲՀ, 1985, - 3, էջ 219–226:

²¹ J. J. S. Weitenberg. նշվ. աշխ., էջ 14–15:

ցական) հանգամանքի տեսանկյունից, որպիսի փորձ առաջին անգամ կատարել էր Օ. Կարիերը:

Նշենք, որ Մեյեի դիտարկումը Կարստի քերականության մեջ է և է, այլև ո ձայնավորների տարբեր արտասանության առնչությամբ, համեմատությունը Օտուճի բառացանկի տվյալների հետ արդեն կար, որն այնքան հնարավորություն կրնաձեռնը հայ բարբառների մեջ դրանց արտացոլումների հիման վրա իրական համեմատություն անցկացնելուն և ճիշտ եզրակացության գալուն, որ փորձում է անել Յ. Վայտենբերգը, իսկ հետագայում՝ նաև Հ. Մուրադյանը:

Ավելի կոնկրետ կարելի է նշել հետևյալը:

ա) Ձայնավորին հաջորդող յ-ի անկում (հմմտ. լուսնկա):

բ) Միջձայնավորային դիրքում ա-ի սդում (հմմտ. երսուն, քառսուն և այլն):

գ) Շեշտված վանկում է, ո ձայնավորների երկբարբառայնացում. հմմտ. երիեկ [eriec], երեքե, երիեսկ [eriesc], երեսքե, կուելկ [Cuelc], կողքե և այլն (հայերեն ձևերն ըստ մեր տառադարձման): Վերջին կետի հետ կապված նշվում է հետևյալը. Այստեղ ուրվագծվող իրավիճակը հայտնաբերված է կիլիկյան հայերենում: Մաիհարկե չի նշանակում, թե բառացանկի բարբառը ճշգրիտ նախորդն է գրական կիլիկյան հայերենի: Ժամանակակից բարբառների երկբարբառացման տարածումը պետք է հաշվի առնել մինչև այս գուգահեռի համար հավաստի փաստարկ գտնելը²²:

դ) Բերված աղյուսակում համեմատության եզրեր են դիտված մի կողմից՝ դասական հայերենի (գրաբարի), մյուս կողմից՝ Սվազի, Երևանի, Տրապիզոնի, Սասունի, Մալաթիայի, Ագուլիսի, Վանի և Ղարաբաղ-Լոռիի (բարբառների) առաջնալեզվային պայթական բաղաձայնների երկու՝ բառասկզբի և միջձայնավորային դիրքում ի հայտ գալու հիման վրա որոշելու բառացանկի բարբառային հիմքը, թեև տեսականորեն ընդունում է, որ դրանցից ոչ մեկի հետ չի կարող այն մերձավոր գծեր ունենալ, որովհետև ժամանակային հեռավորությունը բավական մեծ է, միջանկյալ օղակների անհայտությունը խանգարում է նման եզրակացությանը²³: Այս դեպքում, թերևս, հարկ կար դիմելու համեմատաբանության մեջ լայն տարածում գտած ներքին վերականգնման մեթոդի տվյալներին, որն այս դեպքում անտեսված է:

ե) Բառացանկի միավորների բարբառային պատկանելության որոշման համար տարբերակիչ հատկանիշ է ընտրված միջին բարձրացման է և ո ձայնավորների անկմամբ բառերի առկայությունը, որն այնքան էլ հուսալի չէ, մանավանդ եթե այն սահմանված ենք գտնում ժամանակակից բարբառների մի մասի համար,

²² Նույն տեղում, էջ 16–17:

²³ Նույն տեղում, էջ 19–20: Հմմտ. Հ. Գ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 221–222:

ընդ որում՝ այդ դեպքում անգամ այն բառացանկում միանշանակ ձևով չի դրսևորվում:

Վայտենբերգի եզրակացությունը հետևյալն է. «Օտունի բառարանում ներկայացված բարբառի ծագման վայրի և տիպի մասին նախնական եզրակացությունը առաջին մոտեցումն է, որ արվում է այս հետաքրքիր փաստաթղթի միայն մի քանի յուրահատկությունների հիման վրա»²⁴: Այս մասին նշում է նաև Հ. Մուրադյանը՝ հետևյալ ձևակերպմամբ. «այ տեղեկատու անձը կարող էր եկած լինել Ջեթրոն-Մալաթիա-Մասուն-Վանա լիճ գծին մոտիկ որևէ վայրից: Վայտենբերգը իր այս եզրակացությունը համարում է նախնական և լեզվական այս սկզբնաղբյուրը արժանի է համարում ավելի մանրամասն քննության»²⁵:

Հարկ ենք համարում շեշտել, որ Վայտենբերգը ձեռնպահ է մնում հնչյունական անցումների մի այնպիսի հաջորդականություն հաստատելուց կամ մատնանշելուց, որ հնարավոր լիներ այս կամ այն չափով միջակա օղակներ առանձնացնել այդ անցումների մեջ: Օրինակ՝ հնդեվրոպական լեզուների մեջ հե. *p > f > h > ֆ (զրո) անցումային օղակներ են նշվում, որոնցից այս կամ այն աստիճանին համապատասխանում է ցեղակից լեզուներից մեկնումեկը կամ մի քանիսը. ըստ այդմ՝ հայերենի դեպքում, օրինակ, ունենք հե. *p > հայ. ք (ւ, ֆ). հմմտ. հե. *pes > հետ-ք, հե. *pos > ոս-ն, հե. *pater > հայր, հե. *οὐρα > (h)ուրի և այլն:

Ուշագրավ է Հ. Մուրադյանի հետևյալ գնահատությունը. «... եթե նկատի չունենանք վիմական արձանագրությունները, բառացանկը և Մաշտոցի անվան Մատենադարանի 887 թ. գրչագիր ավետարանը հայերենի ամենահին գրավոր աղբյուրներն են, թեև հնարավոր է նաև, որ բառացանկը լինի ավելի հին»²⁶: Նկատենք, որ այս դեպքում անվանի բարբառագետը անում է մի քանի հարցադրումներ, որոնց շուրջ էլ բերում է իր առարկությունները, հայտնում իր կարծիքը: Վերջինս, անշուշտ, պետք է ըստ ամենայնի նկատի ունենալ բառացանկի հնչյունաբանության և բարբառային հիմքի դեռևս չպարզաբանված խնդրի լուծման համար:

Այնուհետև, ելնելով հայ. լ > ղ (լ-ի վերահնչույթավորումը ղ-ի) անցումից՝ Մուրադյանը գտնում է, որ «բառացանկի լեզուն, որը հայերենի ղ-ի դիմաց հետևողականորեն հանդես է բերում լ, չի կարող լինել IX–X դդ. ծնունդ, այն առնվազն մեկ դարով ավելի հին է, քան կարծվում է»²⁷: Սա ևս նոր վարկած է, ուստի կարևոր է խնդրի համոզիչ լուծման համար:

²⁴ J. J. S. Weitenberg. Նշվ. աշխ., էջ 21:

²⁵ Հ. Դ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 223:

²⁶ Նույն տեղում, էջ 219:

²⁷ Նույն տեղում, էջ 223:

Իսկ իբրև ամփոփում՝ Հ. Մուրադյանը գրում է. «Մակայն անկախ այս բոլորից, լատին-հայերեն բառացանկի լեզվի վերաբերյալ Վայտենբերգի արած դիտարկումները, այդ սկզբնաղբյուրի և հայ բարբառների լեզվական նյութի շուրջ արած դատողություններն ու եզրակացություններն ինքնին հետաքրքիր և ուսանելի են, իսկ բառացանկի լեզվի բարբառային պատկանելության մասին նրա առաջ քաշած կարծիքը՝ գիտական վարկածի կառուցման մի գեղեցիկ փորձ է»²⁸:

Նկատենք, որ Հ. Մուրադյանը գրախոսականի վերջում դնում է բառացանկն ավելի մանր խմբավորմամբ՝ «մարմնի մասեր» (30 բառ), «թվային արժեքներ» (18 բառ), «շաբաթվա օրեր» (3 բառ), «բնության երևույթներ» (6 բառ), «սնունդ» (7 բառ), «անձինք» (4 բառ) և «կրոնական» (4 բառ), ընդամենը՝ 72 բառ, այսինքն՝ դուրս է մնում 18 բառ, որն ուշագրավ է, եթե տարօրինակ չէ: Այնուհետև՝ մի քանիսը, կարծում ենք, բերվում են ոչ այնքան ճիշտ ընթերցմամբ. հմմտ. ատամունք [atamunc]²⁹, փխ. ատմունկ [atmunc], շունչ [scunch], փխ. ծունկ, արմուկն [armunc], փխ. արմունկ, կոչ [cuech], փխ. կոճ և այլն: Նորացված ցանկում դուրս է մնում - շուրջ երկու տասնյակ (18) բառ, որոնցում, կարծում ենք, ոչ պակաս իրողություններ են պարփակված՝ ուշադրության արժանի հայերենի պատմական հնչյունաբանության համար:

Վերջապես, կարևոր ենք համարում ուշադրություն դարձնել նաև հետևյալին:

ա) Մինչ այժմ եղած դիտարկումներում հեղինակները (Կարիեր, Վայտենբերգ, Մուրադյան) լատիներենին զուգահեռ հայերեն (տառադարձված) ձևերը վերականգնում են ոչ թե ըստ եղածի (ինչպիսին որ բնագրում է), այլ, այսպես կոչված, հին կամ ավանդական (գրաբարյան) ձևով, որը «փակում» է դրանց հիման վրա բառացանկի լեզվի բարբառային հիմքը գտնելու ճանապարհը: Մենք հակված ենք կարծելու, որ բնագրի նման միջամտությունը ամեննին տեղին չէ:

բ) Լատինատառ հայերեն ձևերը հայատառ դարձնելիս խախտված են տառադարձման (գրադարձման) առանձին դեպքեր, այսինքն՝ ոչ միշտ է լատիներեն տվյալ գրանշանը հայերեն արտահայտվում նույն նշանով, և հակառակը:

գ) Բառացանկի որոշ բառեր կա՛մ ամեննին չեն վերծանվել, կա՛մ ոչ ճիշտ են վերծանված: Ունենք նման մի քանի օրինակներ, որոնց այստեղ չենք անդրադառնում, որովհետև այն պահանջում է գրչագրական, տառադարձական հմտությամբ, դրանց «ընթերցմանը» վերաբերող ապացուցողական լայն քննարկում:

Անվարան կարելի է հավաստել, որ Օտունի «Հայերեն-լատիներեն բառացանկը» շարունակում է մնալ հայերենի պատմական հնչյունաբանության և բարբառագիտության կնճռոտ հարցերի լուծման ճանապարհին ոչ ըստ ամենայնի պարզաբանված գրավոր հուշարձան:

²⁸ Նույն տեղում, էջ 225:

²⁹ Միայր գալիս է Կարիերից. տե՛ս A. Carrière. Նշվ. աշխ., էջ 14:

«АРМЯНО-ЛАТИНСКИЙ ГЛОССАРИЙ» ОТУНА

ВАЗГЕН АМБАРЦУМЯՅՆ

Резюме

В библиотечном фонде города Отуна во Франции хранится «Армяно-латинский глоссарий» (содержащий 90 слов), приписываемый к концу IX – началу X в. Начиная с 80-х годов XIX в. по сей день он привлекает внимание исследователей - филологов, в особенности специалистов по истории армянского языка и его диалектов (О. Карриер, А. Мейе, И. Вайтенберг, О. Мурадян и др.). Некоторые вопросы, связанные с этим глоссарием, остаются еще нерешенными, в частности его значение для истории армянского языка, исторической фонологии и диалектологии. Необходимо целостное и более подробное исследование этого памятника в будущем.

“THE ARMENIAN-LATIN GLOSSARY” OF AUTUN

VAZGEN HAMBARDZUMYAN

Summary

In the library funds of the French town Autun there is an “Armenian-Latin Glossary” (including 90 words). It was compiled at the end of the 9th century or beginning of the 10th century. From the 1890s till today the glossary was touched upon by a number of philologists, mainly specialists of Armenian language and history of dialects (O. Carrier, A. Meillet, J. Weitenberg, H. Mouradyan and others). Nevertheless, many problems concerning the glossary are still not completely solved. Mainly the problem of its importance for the general literary Armenian and the historical phonetics of dialects. Here, by presenting new facts, we emphasize the necessity to study the work thoroughly. We hope that the problem will be discussed separately in our further works.